Կարգապահական գործ թիվ ԿԳ-23011

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԵՆ ԷԴՈՒԱՐԴԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ դիմող Հակոբ Աբգարյանի և փաստաբան Կարեն Քալանթարյանի ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանի,

քննության առնելով փաստաբան Կարեն Էդուարդի Քալանթարյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 909), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հակոբ Աբգարյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ 15.09.2022թ. ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր է (այսուհետ՝ նաև Պայմանագիր) կնքել «ՔԵՑ ԸՆԴ ՋԻ ԼՈՈՒ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի հետ, և սահմանված կարգով լիազորագիր տրամադրել փաստաբան Կարեն Էդուարդի Քալանթարյանին՝ թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործով իր շահերը ներկայացնելու համար: Նշված Պայմանագրով սահմանված 400.000 ՀՀ դրամ գումարը Դիմողի կողմից վճարվել է ամբողջությամբ:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանի կողմից թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական

գործով որևէ գործողություն չի կատարվել ինքն անձամբ է պատասխանողների հետ վարել բանակցություններ, վեճը լուծել արտադատական կարգով և նշված քաղաքացիական գործով հայցից հրաժարվելու դիմումը ևս ինքնուրույն գրավոր ներկայացրել է դատարանին: Դիմողը հայտնել է, որ նշվածով պայմանավորված, մեկ այլ ներկայացուցչի միջոցով 23.12.2022թ. ծանուցում է ներկայացրել Փաստաբանին Պայմանագիրը լուծելու մասին, ինչին ի պատասխան Փաստաբանը ներկայացրել է 29.12.2022թ. թիվ Ե-734/12/22 գրությունը:

Դիմողը հայտնել է, որ 09.01.2023թ. կրկին ներկայացվել է ծանուցում Պայմանագիրը լուծելու մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանը Պայմանագրով սահմանված որևէ ծառայություններ չի մատուցել, և ծանուցումը ստանալու պահից Պայմանագիրը լուծված համարել, իսկ ծանուցումը ստանալու պահից 3 (երեք) բանկային օրվա ընթացքում հետ վերադարձնել Դիմողի կողմից վճարված գումարը:

Ըստ դիմողի՝ 09.01.2023թ. ծանուցումը Փաստաբանը ստացել է 12.01.2023թ., սակայն մինչ օրս գրավոր պատասխան չի ներկայացրել դրա վերաբերյալ, ինչպես նաև գումարը չի փոխանցել Դիմողի բանկային հաշվին:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 18.04.2023 թվականին Դիմողին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Նշվածին ի պատասխան՝ Դիմողը 26.04.2023թ.-ի (մուտք թիվ՝ 890-23) գրությամբ ներկայացրել է թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործի նյութերի պատճենները:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Կարեն Էդուարդի Քալանթարյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Հակոբ Աբգարյանի դիմումների վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի փետրվարի 23-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Դիմողի և «ՔԵՑ ԸՆԴ ՋԻ ԼՈՈԻ ՖԻՐՄ» ՍՊԸ-ի միջև 15.09.2022թ. կնքված Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ պետք է մատուցվեին հետևյալ ծառայությունները.

- բանակցություններ վարել ք. Երևան, Ռաֆֆու փողոց 27 շենք 12 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի սեփականատերերի հետ՝ կապված նշված գույքում Դիմողի բաժնեմասի շուկայական արժեքով փոխհատուցում ստանալու հետ,
- Դիմողի անունից ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

դատարան ներկայացնել հայցադիմում համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքից բաժնեմասն առանձնացնելու պահանջի մասին, իսկ նման հայցադիմում այլ փաստաբանի կողմից արդեն իսկ ներկայացված լինելու, դեպքում այդ գործի շրջանակներում, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նաև ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում ներկայացնել Դիմողի շահերը՝ մասնավորապես, կազմել անհրաժեշտ դատավարական փաստաթղթեր և մասնակցել հրավիրված դատական նիստերին:

Փաստաբանը՝ վկայակոչելով Պայմանագրի 2.4.2, 4.7, 4.8 և 4.9 կետերը, հայտնել է, որ ծառայությունները՝ Պայմանագրին համապատասխան մատուցված համարվելու հիմքերով լուծելու դեպքում Փաստաբանին վճարված գումարը ենթակա չէ վերադարձման:

Փաստաբանը նշել է, որ Դիմողի իրավունքների պաշտպանությամբ մինչ այդ զբաղվել է մեկ այլ փաստաբան, ով 16.09.2022թ. դատարան առձեռն ներկայացրել է հայցադիմում՝ ընդդեմ Գայանե Հարությունյանի, Նինա Ավգարյանի, Թամարա Աբգարյանի՝ համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքից հայցվորի բաժինն առանձնացնելու, իսկ բաժինը բնեղենով առանձնացնելու անհնարինության պարագայում գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու և ստացված գումարը ընդհանուր սեփականության մասնակիցների միջև նրանց բաժիններին համաչափ բաշխելու պահանջի մասին: Նշված քաղաքացիական գործով (թիվ ԵԴ/48386/02/22) Փաստաբանը դատարանին տեղեկացրել է այն մասին, որ ինքը լիազորված է ներկայացնելու Դիմողի շահերը և իրավունքները՝ խնդրելով փոստային առաքանիները ուղարկել ք. Երևան, Կիևյան 3/51 հասցեով՝ կից տրամադրելով Դիմողի դիմումը նրա և փաստաբան Արմինե Հակոբյանի միջև կնքված պայմանագիրը լուծված լինելու մասին:

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը նշված ժամանակահատվածում մի քանի անգամ այցելել է գրասենյակ, զանգահարել է պարզելու գործի հետագա ընթացքը, ստացել է բովանդակալից պատասխաններ, նրան պարզաբանվել է, որ անհրաժեշտ Է սպասել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշմանը, ինչից հետո կկապնվեն պատասխանողների հետ՝ բանակցություններ վարելու և արտադատական կարգով խնդրին արագ լուծում տալու համար:

Փաստաբանի պնդմամբ, ինքը պարբերաբար զանգահարել է դատարան՝ գործի ընթացքը ճշտելու համար, իսկ 22.10.2022թ. «datalex» դատական տեղեկատվական համակարգում տեղադրվել է հայցը վարույթ ընդունելու մասին դատարանի 30.09.2022թ. որոշումը: Նշվածից հետո, 28.10.2022թ. Դիմողը կապնվել է Փաստաբանի հետ և հայտնել այն մասին, որ պատասխանողները փորձել են կապի դուրս գալ իր հետ, ինչի պատճառով վերջինս խնդրել է Փաստաբանին զանգահարել պատասխանողներին և բանակցություններ վարել նրանց հետ:

Փաստաբանը հայտնել է, որ 29.10.2022թ. կապ է հաստատել թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործով պատասխանող Գայանե Հարությունյանի և վերջինիս որդու՝ Համլետի հետ՝ պայմանավորվելով հանդիպել 30.10.2022թ. և մանրամասն քննարկել

խնդիրը, ինչի վերաբերյալ տեղեկացվել է նաև Դիմողը: Փաստաբանը նաև նշել է, որ 30.10.2022թ. իր հետ կապ են հաստատել պատասխանողները՝ Գայանեն և Համլետը, հայտնելով, որ ցանկանում են վաճառել բնակարանը և խնդրել են հրաժարվել հայցադիմումից: Նշվածին ի պատասխան՝ Փաստաբանը հայտնել է, որ, որպես Դիմողի իրավունքների և շահերի պաշտպան, չի հրաժարվի հայցադիմումից այնքան ժամանակ, քանի դեռ չի լուծվի Դիմողի հարցը և նրան փոխհատուցում չի տրամադրվի:

Փաստաբանի պնդմամբ, արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել առ այն, որ բնակարանը պետք Է վաճառվի, իսկ Դիմողին փոխհատուցում տրամադրվի, որից հետո նոր կհրաժարվեն դատարան ներկայացված հայցադիմումից, ինչի վերաբերյալ Փաստաբանն անմիջապես տեղեկացրել է Դիմողին: Ըստ Փաստաբանի, նշվածից հետո Դիմողը ոչ զանգահարել է և ոչ այցելել է գրասենյակ հետագա իրադարձությունները կամ Դիմողի մտադրությունները քննարկելու համար, ինչից ելնելով Փաստաբանը սպասել է դատարանի կողմից նշանակված դատական նիստին:

Փաստաբանը նաև հայտնել է, որ 09.12.2022թ. Դիմողի կողմից ստացել է հաղորդագրություն այն մասին, որ Փաստաբանը ոչ մի գործողություն չի կատարել, խաբել է իրեն և ինքն ինքնուրույն է լուծել հարցերը, հաշտվել է պատասխանողների հետ՝ խնդրելով լուծել Պայմանագիրը և վճարված գումարները հետ վերադարձնել: Նշվածի կապակցությամբ Փաստաբանն առաջարկել է Դիմողին այցելել գրասենյակ և տեղում լուծել առաջացած խնդիրը և լուծել Պայմանագիրը:

Փաստաբանը նշել է, որ այդ ընթացքում Կադաստրի կոմիտեից ստացել է վեճի առարկա բնակարանի կադաստրային գործի նյութերը, որոնց ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ 05.12.2022թ. ք. Երևան, Ռաֆֆու փողոց թիվ 27 շենքի թիվ 12 հասցեում գտնվող անշարժ գույքն արդեն օտարվել է, ինչով ըստ էության Դիմողի պահանջները բավարարվել են: Փաստաբանի պնդմամբ, ինքը հետագայում պարզել է, որ Դիմողն այս ընթացքում, առանց իրեն տեղյակ պահելու դիմում է ներկայացրել դատարան և հրաժարվել հայցից, իսկ նման մտադրության կամ այդ գործողության մասին ինքը տեղեկացված չի եղել:

12.01.2023թ. ստանալով Դիմողի ծանուցումը՝ 30.01.2023թ. գրությամբ Փաստաբանը հայտնել է Դիմողին այն մասին, որ Պայմանագիրը համարվում է լուծված՝ նշելով, որ, եթե հայցվորը ինքնակամ հրաժարվում է հայցից, ապա վերջինիս կողմից Փաստաբանին վճարված գումարը վերադարձման ենթակա չէ: Փաստաբանի պնդմամբ, նշված գրությունը LO107799821AM բեռնային համարով 01.02.2023թ. ստացվել է հասցեատիրոջ կողմից:

Փաստաբանը նշել է նաև, որ Դիմողի կողմի բարձրացված հարցերը կարգավորվում են Պայմանագրին համապատասխան, ինչը հաշվի առնելով՝ խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 18.04.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի

5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Նշվածին ի պատասխան՝ Փաստաբանը 27.04.2023թ.-ի (մուտք թիվ՝ 901-23) գրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված իր դիրքորոշումը՝ հավելելով, որ թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործով պատասխանողների հետ բանակցություններ վարելուց հետո, մինչև իր հետ Պայմանագիրը լուծելու մասին Դիմողի կողմից ծանուցում ներկայացնելը, վերջինս արդեն իսկ ստացել էր իր պահանջների բավարարում, ինչը հիմնավորվում է 05.12.2022թ.-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով: Նշվածից հետո միայն Դիմողն իրեն ուղարկել է հաղորդագրություն՝ պահանջելով վերադարձնել Պայմանագրով իր կողմից վճարված ամբողջ գումարը:

Փաստաբանի պնդմամբ, իր կողմից իրականացվել են կնքված Պայմանագրով սահմանված ծառայությունները, ինչն ավարտվել է Դիմողի պահանջների բավարարմամբ, քանի որ հակառակ պարագայում, Դիմողը դժգոհ լինելով Փաստաբանի կողմից մատուցվող ծառայություններից, Պայմանագիրը լուծելու էր և գումարը վերադարձնելու դիմում էր ներկայացնելու մինչև անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքումը:

Փաստաբանը հայտնել է նաև, որ Պայմանագիրը լուծելուց հետո Դիմողին չի վերադարձրել հոնորարի մի մասը, քանի որ նման պարտավորություն (պայման) իրենց միջև 15.09.2022թ.-ին կնքված Պայմանագրով չի նախատեսվել՝ հղում կատարելով Պայմանագրի 4.8 և 4.9 կետերին, երբ պատվիրատուի կողմից վճարված գումարը ենթակա չէ վերադարձման: Փաստաբանը նաև նշել է, որ Կանոնագրքի 3.8.4 կետով սահմանվում է, որ Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ, մինչդեռ տվյալ դեպքում 15.09.2022թ.-ին կնքված Պայմանագրով հստակ սահմանվել են դեպքեր, երբ Պայմանագրով պատվիրատուի կողմից վճարված գումարը ենթակա չէ վերադարձման:

Նշված գրությանը կից Փաստաբանի կողմից ներկայացվել են Պալատի նախագահին հասցեագրված իր 23.02.2023թ.-ի բացատրության և կից նյութերի պատճենները, ինչպես նաև Դիմողի և իր միջև «WhatsApp» հավելվածից տեքստային հաղորդագրությունների քաղվածքը և ձայնային հաղորդագրությունները անցկացված էլեկտրոնային կրիչի վրա:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 02.03.2023թ. թիվ 63-Ա/ԿԳ-23011 որոշմամբ փաստաբան Կարեն Քալանթարյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 2-րդ կետի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ

հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 3.8.4 ենթակետի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

07.03.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 08.05.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ Դիմողն անձամբ հրաժարվել է թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործով ներկայացված հայցից:

Եզրակացությամբ նշվում է՝ չնայած նրան, որ Փաստաբանը Պայմանագրի շրջանակներում, ըստ էության, ամբողջ ծավալով չի կատարել իր պարտականությունները, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Կանոնագիրքը հղում է կատարում Պայմանագրին, որով նախատեսված են որոշ դեպքեր, երբ պայմանագիրը լուծելու դեպքում վճարված գումարը ենթակա չէ վերադարձման, որպիսի պայմաններում, Փաստաբանի կողմից փաստացի չկատարված աշխատանքի դիմաց վճարված գումարը Դիմողին չվերադարձնելու հարցը գտնվում է Կանոնագրքի կարգավորման տիրույթից դուրս:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 08.05.2023թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 15.06.2023թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև 15.09.2022թ. կնքված Պայմանագրով:*

2. Դիմողը վճարել է Պայմանագրի գումարը: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացված*

22.12.2022թ. վճարման անդորրագրով:

3. Թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում Դիմողն անձամբ հրաժարվել է հայցից: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործով Դիմողի 06.12.2022թ. դիմումով:*

4. Դիմողի և Փաստաբանի միջև կնքված Պայմանագիրը լուծվել է: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Դիմողի՝ 09.01.2023թ. և Փաստաբանի՝ 30.01.2023թ. գրություններով:*

5. Պայմանագրով կարգավորված են դրա լուծման, ինչպես նաև դրա արդյունքում Պայմանագրի գինը վերադարձնելու առանձնահատկությունները, որպիսի պայմաններում Փաստաբանի կողմից փաստացի չկատարված աշխատանքի դիմաց վճարված գումարը Դիմողին չվերադարձնելու հարցը գտնվում է Կանոնագրքի կարգավորման տիրույթից դուրս: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև Պայմանագրով, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 ենթակետով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Կարեն Քալանթարյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009 թվականից և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Կարեն Էդուարդի Քալանթարյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի*

պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.*

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ ի թիվս այլնի, վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս

ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Հարկ է նաև հավելել, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետն իր հերթին, փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում որոշակիություն և կանխատեսելիության համատեքստում՝ որպես իրավական երաշխիք, ի թիվս այլնի, նախատեսում է պայմանագիրը լուծելիս որոշակի գործողություններ փաստացի կատարված չլինելու դեպքում հոնորարի մի մասը վերադարձնելու փաստաբանի պարտավորությունը, ***եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:***

Այլ կերպ ասած, Կանոնագրքի նշված դրույթի կարգավորման կիրառման համար անհրաժեշտ է որոշակի վավերապայմանների միաժամանակյա առկայությունը, մասնավորապես՝

1. *Փաստաբանի և վստահորդի միջև* ***պայմանագիրը լուծված լինելը,***
2. *Փաստաբանի կողմից իրեն տրված հանձնարարության շրջանակներում* ***որոշակի գործողություններ կատարված չլինելը,***
3. *վճարված գումարը վերադարձնելու* ***հարցը պայմանագրով կարգավորված չլինելը****:*

Տվյալ դեպքում Դիմողն ըստ էության Փաստաբանին վերագրում է Պայմանագիրը լուծելիս պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք, վստահորդին չվերադարձնելու վարքագիծը:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում Դիմողը փաստացի անձամբ 06.12.2022թ. դիմումով հրաժարվել է հայցից, ինչից հետո Դիմողը՝ Փաստաբանին հասցեագրված 09.01.2023թ. գրությամբ, փաստացի նաև լուծել է Պայմանագիրը և պահանջել է վերադարձնել Պայմանագրով վճարված գումարը: Նշվածին ի պատասխան Փաստաբանն, իր հերթին, Դիմողին հասցեագրված 30.01.2023թ. գրությամբ հաստատել է Պայմանագիրը լուծված լինելու հանգամանքը՝ հղում կատարելով Պայմանագրի կետին առ այն, որ եթե հայցվորն ինքնակամ հրաժարվում է հայցից, ապա վերջինիս կողմից Փաստաբանին վճարված գումարը ենթակա չէ վերադարձման:

Միաժամանակ, անդրադառնալով կարգապահական վարույթի շրջանակներում ներկայացված, Դիմողի և Փաստաբանի կողմից վկայակոչված Պայմանագրի կարգավորումներին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ դրանում առկա դրույթները փաստացի կարգավորում են պայմանագիրը լուծելու դեպքում գումարի վերադարձմանը վերաբերող հարցերը:

Մասնավորապես, նշված հարցերն ուղղակիորեն կարգավորված են **Պայմանագրի**.

2.4.2 կետով, որի համաձայն՝ *Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ գրավոր կարգով առնվազն 10 (տասը) օր առաջ ծանուցելուց հետո, միակողմանի լուծել Պայմանագիրը, որի դեպքում Պայմանագրի 3.1 կետով սահմանված գումարը ենթակա չէ վերադարձման, իսկ այն վճարված չլինելու դեպքում ենթակա է վճարման ամբողջությամբ:*

4.5 կետով, որի համաձայն՝ *Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար Պատվիրատուի կողմից վճարված գումարը անկախ ելքից կատարողի կողմից վերադարձման ենթակա չէ,*

4.8 կետով, որի համաձայն՝ *ծառայությունը նաև մատուցված է համարվում, երբ սույն Պայմանագրի 1.2 կետում նշված՝*

1) Պատվիրատուի գործը նախքան դատարան դիմելը կամ արտադատական այլ կարգով ստացել է որևէ լուծում կամ

2) Պատվիրատուի գործը դատական քննության փուլում ձեռք բերված հաշտության հիմքով ավարտվել է հաշտությամբ (հաշտության համաձայնագրի ստորագրմամբ) կամ

3) Պատվիրատուի գործով դատարանի քննության փուլում Պատվիրատուն հրաժարվել է հայցից, հակընդդեմ հայցից (դատական գործից) կամ

4) Պատվիրատուի գործով դատարանի կողմից դատական գործի ավարտը Պատվիրատուն հրաժարվում է Պայմանագրով մատուցվող ծառայություններից կամ

5) Պատվիրատուի գործով նախքան դատարանի կողմից գործով ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը Պատվիրատուն հրաժարվում է Պայմանագրով մատուցվող ծառայություններից կամ

6) Երբ Պայմանագրով սահմանված պայմանների համաձայն լուծվում է Պայմանագիրը:

4.9 կետով, որի համաձայն՝ *Պայմանագրի 4.8 կետում նշված հիմքերով պայմանագիրը լուծելու դեպքում Պատվիրատուի կողմից կատարողին վճարված ծառայության գումարը ենթակա չէ վերադարձման:*

Այս համատեքստում, Դիմողի կողմից թիվ ԵԴ/48386/02/22 քաղաքացիական գործով հայցից հրաժարվելու, իսկ հետագայում նաև Պայմանագիրը լուծելու պայմաններում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետով ամրագրված պահանջի պահպանման հարցի քննարկումն ըստ էության դուրս է գալիս Կանոնագրքի կարգավորման տիրույթից, քանի որ առկա է նշված կանոնի կիրառումը բացառող պայմանը: Այսինքն, Դիմողի և Փաստաբանի միջև կնքված Պայմանագրի շրջանակներում նշված հարցի կարգավորված լինելն արդեն իսկ բացառում

է Փաստաբանի վարքագծում այդ ենթակետով սահմանված խախտման հատկանիշների առկայության կամ բացակայության քննարկման հնարավորությունը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի կարգավորման կիրառման տրամաբանության ներքո բացակայում են դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը, որպիսի պայմաններում էլ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքներին և Փաստաբանի արարքի գնահատմանը անդրադարձ չի կատարվում, ուստի դրանք ենթակա չեն քննարկման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում է փաստաբան Կարեն Էդուարդի Քալանթարյանի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարեն Էդուարդի Քալանթարյանի (արտոնագիր՝ թիվ 909) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23011 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23011-2-Ա
15 հունիսի 2023թ.
ք.Երևան